

Հայաստանի Հանրապետություն

«ՆՈՐԳԵՈ» ՍՊԸ

Եզրակացություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի հարևանությամբ
2 տեղամասերի վերաբերյալ

Պատվիրատու՝ «Կապավոր» ՍՊԸ

Տնօրեն՝

Գլխ. մասնագետ եզր՝



Գ. Ա. Դավթյան

Ա. Գ. Մուխսի-Հովեյան

Ք. Երևան- 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	5
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ.....	7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ պատվիրատուի՝ Կապավոր ՄՊԸ տրված տեխնիկական առաջադրանքի անհրաժեշտ է պատվիրատուի կողմից նշված հատվածներում իրականացնել հորատման աշխատանքեր մոտավոր պատկերացում կազմելու տարածքում առկա ապարների տեսակի, տեղադրման խորության վերաբերյալ և տալ ակնադիտական նախնական գնահատական:

Վերանշված տարածքները գտնվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղից արևմուտք և հարավ Սևանա լճի հարավային ափին:


Շրջանի ռելեֆը տիպիկ լեռնային է ծովի մակերևույթից մինչև 2012 մ բացարձակ նիշերի սահմաններում:

Շրջանի հիմնական ջրհավաք ավազանը Սևանա լճի գոգահովիտն է:

Շրջանի կլիման մայրցամաքային է, լեռնատափաստանային, կենտրոնական-ասիական տիպի՝ խիստ, ձյունառատ, շարունակական ձմեռով (4-6 ամիս):

Հողածածկի սառցակալումը հասնում է 0.6-1.0 մ: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +3,6 °C, նվազագույնը՝ -25,9 °C (փետրվար): Տարեկան միջին տեղումների քանակը 423 մմ է: Ձմռան շրջանում բնորոշ են ձյունահողմերը:

Տարածքի սեյսմիկությունը 8-9 բալ է (Ռիխտերի սանդղակով):



⊙ Ուսումնասիրվող տեղամասեր

Գեղարքունիքի մարզը աչքի է ընկնում հաղորդակցման ուղիների բավական զարգացած ցանցով: Սևանա լճի շուրջը առկա է Գավառ-Մարտունի-Ծովագյուղ-Սևան-Գավառ օդակաձև ավտոճանապարհը, որը միանում է Երևան-Սևան-Դիլիջան ավտոմայրուղու հետ Մարտունի-Եղեգնաձոր, Վարդենիս-Սոթք և Շորժա-Ճամբարակ ավտոճանապարհներով:

Մարզի տնտեսությունը բնութագրվում է առավելապես գյուղատնտեսական ուղղվածությամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրվող շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Կ. Ն. Պաֆենհոլցը, Հ. Հ. Գաբրիելյանը, Պ. Լ. Եփրեմյանը և ուրիշներ:

Ըստ ֆոնդային նյութերի ուսումնասիրվող տեղամասում Սևանա լճից հարավ ափամերձ հատվածները ներկայացված են ալուվիալ, դելուվիալ, պրոլուվիալ նստվածքային առաջացումներով իսկ ավելի խորք ընգած հատվածներում ներկայացված են չորորդականի հասակի բազալտներով, անդեզիտաբազալտներով և օլիվինային բազալտներով:

Ուսումնասիրվող հատվածում ներկայացված են միջին չորորդականի անդեզիտաբազալտներով և բազալտներով: Այս հասակի բազալտները տարածվում են Արծվանիստ գյուղից արևելք դեպի Վարդենիս քաղաքի ուղղությամբ:

Ըստ ֆոնդային նյութերի ուսումնասիրվող տեղամասի շրջանում են գտնվում Կարճաղբյուրի կավի, Արծվանիստի, Ոսկեհատի, Սուրբսարի, Լուսակունքի բազալտի հանքավայրերը և հանքային երևակումները, Սուբաթանի տուֆի հանքավայրը, միշարք հրաբխային խարամի, ավազի, պեմզային ավազի հանքեր և հանքերևակումներ:

Ուսումնասիրվող I-ին տեղամասը գտնվում է Ծովակ գյուղից ուղիղ գծով մոտ 1 կմ արևմուտք II-ը՝ 1.5 կմ հարավ:



<< ՆՆՐԳԵՆ >> ՄԴԸ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Ոսունմնասիրվող առաջին տեղամասը գտնվում է Ծովակ գյուղից ուղիղ գծով մոտ 1 կմ արևմուտք զբաղեցնում է 2479 մ² տարածք միջինացված 1962 մ բացարձակ բարձրության վրա:

Երկրարդ տեղամասը գտնվում է Ծովակ գյուղից ուղիղ գծով մոտ 1.5 կմ հարավ զբաղեցնում է 18558 մ² տարածք 1980-2012 մ բացարձակ նիշերի վրա:

Հորատման աշխատանքները իրականացվել են URB 2A2 հորատող հաստոցով, որպես հորատման հեղուկ օգտագործվել է տեխնիկական ջուր:

Ամեն տեղամասում հորատվել է 1 ական հորատանցքեր, որոնց նկարագիրը և նկարները ներկայացվում են ստորև:



Հորատանցք 1 (1963 մ)

<u>0,0-0,5</u> 0,5	Հողաբուսական շերտ կավավազներով:
<u>0,5-3,9</u> 3,4	Խարամ հրաբխային, խճաքարամանրախճային կազմի, միջին խտության:
<u>3,9-5,0</u> 1,1	Բազալտ ճեղքավորված, փոքրաբեկորներով խարամային և խճաքարային լցանյութերով, արմատական տեղադրումով:
<u>5,0-8,0</u> 3,0	Բազալտ ամբողջական, մեծաբեկորային առանձնացումներով, արմատական տեղադրումով:
<u>8,0-8,5</u> 0,5	Բազալտ ճեղքավորված, փոքրաբեկորներով խարամային և խճաքարային լցանյութերով, արմատական տեղադրումով:
<u>8,5-13,0</u> 4,5	Հրաբխային խարամ մինչև 9,0մ այնուհետև խճաքարամանրախճային գրունտներ, կավավազներ:



Հորատանցք 2 (2002 մ)

<u>0,0-0,9</u> 0,9	Հողաբուսական շերտ կավավազներով:
<u>0,9-4,5</u> 3,6	Բազալտ ճեղքավորված, փոքրաբեկորներով խարամային և խճաքարային լցանյութերով, արմատական տեղադրումով:
<u>4,5-17,0</u> 12,5	Բազալտ ամբողջական, մեծաբեկորային առանձնացումներով, արմատական տեղադրումով, 7-11 միջակայքում ներկայացված են փոքրաբեկորային առանձնացումներով:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրվող տեղամասերում կատարված աշխատանքների ծավալը, արդյունքների վերլուծությանը թույլ է տալիս կատարել հետևյալ նախնական եզրահանգումները.

- Ուսումնասիրվող տեղամասերը գտնվում են Ծովակ գյուղի հարևանությամբ միմյանցից մոտ 2.6 կմ հեռավորության վրա:
- Ըստ ակնադիտական դիտարկումների և ֆոնդային նյութերի ուսումնասիրվող տեղամասերում ներկայացված են չորորդականի հասակի անդեզիտաբազալտներով:
- Ուսումնասիրվող տեղամասերի բազալտները ծակոտկեն են, տեղ-տեղ խոռոչավոր:
- Բազալտները աբոդջական՝ համամատաբար մեծ մեծաբեկորային են դառնում 4-5մ հորիզոնից ներքև:
- Առաջին տեղամասում բազալտները ծածկված են մոտ 3.9 մ հզորությամբ հողաբուսական, խարամային, խճաքարամանրախճային շերտերով, ի տարբերություն երկրորդ տեղամասի որտեղ բազալտները ծածկված են մոտ 1մ հողաբուսական շերտով:
- Առաջին տեղամասում 3,9-5,0 մ հորիզոնները ներկայացված են ճեղքավորված, փոքրաբեկորավոր բազալտներով և այս հորիզոնում մեծաբեկորների առանձնացման և դուրսբերման հավանականությունը շատ փոքր է:

- Հանքային շրջանում՝ ուսումնասիրվող տեղամասերին մոտ, դեռևս Սովետական Միության տարիներին հայտնաբերվել և ուսումնասիրվել են Ոսկեհատի բազալտի հանքավայրը և Սուրբսարի բազալտի հանքերնակումը, ըստ որի կարելի է ակնկալել ընդհանուր բազալտային շերտից առավելագույնը 30 % բլոկների (մեծաբեկորներ) ելք:
- Տեղամասերից մեծաբեկորների արդյունահանումը կապված է պայթեցման և բուն արդյունահանման մեթոդներից նույնպես:
- Ոսումնասիրվող տեղամասերից առավել հետաքրքիր է II տեղամասը քանի որ ծածկված է ընդամենը 0.9 մ հզորության հողաբուսական շերտով, զբաղեցնում է ավելի մեծ մակերես (1.8 հա), իսկ բազալտային հաստվածքը հատված չէ ամբողջ հզորությամբ, այսինքն շարունակկվում է ավելի խորը հորիզոններում:
- I-ին տեղամասը զբաղեցնում է ավելի փոքր մակերես, բազալտային շերտերի ավելի փոքր հզորություններով և ծածկված են մոտ 3.9 մ հզորությամբ հողաբուսական, խարամային, խճաքարամանրախճային շերտերով, ինչը արդյունահանման և տեղափոխման մեծ ծախսեր է ենթադրում, սակայն նախատեսվող աշխատանքներին շատ ավելի մոտ է գտնվում: Անհրաժեշտ է կատարել տնտեսական հաշվարկներ և հիմնավորել նպատակահարմարությունը: